## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ դատական դեպարտամենտը, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է <<**ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/9-06-7**>> ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2016թ-ի հունիսի 9-ին կնքված պայմանագրում 2016թ-ի հունիսի 29-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Կողմերի մոտ անհրաժեշտություն է առաջացել կնքված պայմանագրում փոփոխություն կատարելու:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը որոշել են պայմանագրի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ համաձայն թիվ 1 համաձայնագրի:

Փոփոխության հիմնավորում: Գնումների մասին ՀՀ օրենսդրություն, ինչպես նաև՝ Պայմանագրի 9.4 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Համբարյանին

Հեռախոս՝ 10 511754, 511788

Էլ. փոստ՝ datgnumner@mail.ru

Պատվիրատու՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ

# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

**09.06.2016թվականին կնքված N<<ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/9-06-7>>**
**պետական գնման պայմանագրի**

**ք.Երևան** 29 **հունիսի 2016թ.**

<<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ն՝ ի դեմս ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար Ռ. Ասիկյանի, որը գործում է <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Գնորդ>>, մի կողմից, և <<Հայր և Որդի Գյոդակյաններ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Լ.Գյոդակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ <<Վաճառող>> մյուս կողմից, ղեկավարվելով 09.06.16թ. կնքված N <<ԴԴ-ԾՀԱՊՁԲ-15/9-06-7>> պետական գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 9.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին՝

1.1Պայմանագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

**5.ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ**

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5.2 Ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից Ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.2Սույն Համաձայնագիրը կազմված է 1էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

**ԳՆՈՐԴ**
***«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ***
Հասցե՝ ք.Երևան, Վազգեն Սարգսյան 5
ՀՎՀՀ՝ 02583241
Հ/Հ՝ 900011005841
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ռ.Ասիկյան

-------------------------------------
(ստորագրություն) Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
***«Հայր և Որդի Գյոդակյաններ»ՍՊԸ***
Շիրակի մարզ, ք.Գյումրի, Փանյան 1
«Ինեկոբանկ»ՓԲԸ Գյումրու մ/ճ
Հ/Հ 2050122024171001
ՀՎՀՀ 05524546

Տնօրեն՝ Լ.Գյոդակյան

-------------------------------------
(ստորագրություն) Կ.Տ